60 ԲՆԱԳԱՎԱՌ, ՈՒՐ ԳՈՐԾՈՒՄ Է ՄԱԿ-Ը

Միավորված ազգերի կազմակերպության 60-ամյա հոբելյանն առիթ է վերհիշելու այն բոլոր բարի գործերը, որ արել է կազմակերպությունը երկարամյա պատմության ընթացքում: ՄԱԿ-ը եղել է XX դարի երկրորդ կեսի և XXI դարասկզբի կարևոր իրադարձությունների և շարժումների կենտրոնում, ինչպիսիք են աղետալի պատերազմի կանխումը, կյանքի տևողության երկարաձգումը, օգնությունը հուսահատ պայմաններում գտնվող մարդկանց, մոլորակի բնական պաշարների պահպանումը և մարդու իրավունքների համընդհանուր ճանաչման խթանումը: Կազմակերպությունը ջանում է աջակցել գլոբալացման լայնածավալ գործընթացին և մոտեցնել այն օրը, երբ չքավորությունն այլևս կյանքի իրողություն չի լինի:

Վաթսունամյա սահմանագիծը մեզ հիշեցնում է նաև, որ աշխարհն այսօր խիստ տարբերվում է մեր կազմակերպության հիմնադիրների ժամանակներից: Միավորված ազգերի կազմակերպության գործունեությունը պետք է արտացոլի այս նոր դարաշրջանը և արձագանքի դրա մարտահրավերներին, այդ թվում և ամենից առաջ այն իրողությանը, որ բազմաթիվ անպաշտպան մարդիկ դեռևս մատնված են սովին, հիվանդություններին և վատթարացող բնակլիմայական պայմաններին, թեև մարդկությունը միջոցներ ունի նրանց փրկելու համար: Միավորված ազգերի նորացված կառույցը պետք է օգնի փոխելու այդ իրավիճակը և համագործակցի շատ գործընկերների հետ՝ իր հիմնադիրների ազնիվ նպատակներն առաջ տանելու համար:

ՔՈՖԻ ԱՆԱՆ

2005թ., 24 հոկտեմբերի

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) ստեղծվեց որպես երկրորդ համաշխարհային կործանիչ պատերազմի արդյունք, որպեսզի կայունացնի միջազգային կապերը և խաղաղությանը տա ավելի հաստատուն հիմքեր:

Միջուկային պատերազմի վտանգի և շարունակվող տարածքային տարակարծությունների պատճառով խաղաղապահության գործընթացը դարձել է ՄԱԿ-ի առաջնահերթ մտահոգությունը, իսկ «Կապույտ սաղավարտավոր» խաղաղապահների աշխատանքը՝ դարձել է ՄԱԿ-ի ամենաակնառու գործունեություններից մեկը:

Բայց ՄԱԿ-ը շատ ավելին է, քան խաղաղապահ լինելն ու տարակարծությունների լուծման համար ֆորում ծառայելը: Հաճախ, առանց ուշադրություն գրավելու, ՄԱԿ-ը և իր հաստատությունների ընտանիքը զբաղվում են հսկայածավալ աշխատանքներով՝ նպատակ ունենալով բարելավել մարդկանց կյանքը ամբողջ աշխարհում:

Երեխայի գոյատևում ու զարգացում, բնապահպանություն, մարդու իրավունքներ, առողջապահական և բժշկական հետազոտություն, աղքատության նվազեցում ու տնտեսական զարգացում, գյուղատնտեսության զարգացում ու ձկնորսություն, կրթություն, կանանց առաջխաղացում, արտակարգ իրավիճակների և աղետների օժանդակություն, օդային և ծովային երթևեկություն, ատոմային էներգիայի կիրառում խաղաղ նպատակներով, աշխատանքային և աշխատավորների իրավունքներ. ու դեռ այս շարքը կարող է շարունակվել:

Ստորև հակիրճ ներկայացված է այն հանրագումարը որ ՄԱԿ-ը իր տարբեր մասնաճյուղերի աջակցությամբ իրականացրել է իր հիմնադրման օրից՝ 1945թ. ի վեր:

Խնկոյան 3/4 կառուցման / ցուցադրասրահ

1 Զարգացման խրախուսում

Միավորված ազգերի կազմակերպությունն իր ուշադրությունն ու միջոցները նվիրել է համայն աշխարհում կենսամակարդակի բարձրացման և մարդկային հմտությունների ու ներուժի խթանման գործին: 2000 թվականից ի վեր այդ աշխատանքն առաջնորդվում է Հազարամյակի զարգացման նպատակներով (ՀԶՆ/MDG): ՄԱԿ-ի տարեկան հատկացումները զարգացման գործընթացներին, չհաշված միջազգային ֆինանսական հաստատությունների հատկացումները, գերազանցում են 10 միլիարդ դոլարը: Օրինակ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, որ աշխատակազմեր ունի աշխարհի 166 երկրներում, զարգացող երկրներում ղեկավարում է ՄԱԿ-ի՝ ծայրահեղ աղքատության վերացման ու պատշաճ կառավարման խթանման աշխատանքները: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ/UNICEF) գործում է աշխարհի 157 երկրներում և հիմնականում երեխաների պաշտպանության, պատվաստումների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի և աղջիկների կրթության վրա տարեկան ծախսում է ավելի քան 1,2 միլիարդ դոլար: ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը (ՄԱԱԶՀ/UNCTAD) օգնում է պետություններին զարգացման նպատակներով լավագույնս օգտվել առևտրի հնարավորություններից: Բացի դրանից, Համաշխարհային բանկը տարեկան 18-20 միլիարդ դոլարի հասնող փոխառություններ ու դրամաշնորհներ է տրամադրում զարգացող երկրներին և 1947 թվականից ի վեր աջակցել է ավելի քան 9500 զարգացման ծրագրերի: Զարգացման աջակցության բոլոր հիմնադրամներն, ըստ էության, տրամադրվում են պետությունների կողմից տրվող նվիրատվություններից:

Հանդես նախագահի մամուլի ասուլիսում

2 Ժողովրդավարության խթանում

Միավորված ազգերի կազմակերպությունն օժանդակել է աշխարհում ժողովրդավարական կառույցների առաջխաղացմանն ու ամրապնդմանը: Կազմակերպությունը մեծ թվով երկրներում, ինչպես օրինակ՝ Կամբոջայում, Նամիբիայում, Էլ Սալվադորում, Էրիթրեայում, Մոզամբիկում, Նիկարագուայում, Հարավային Աֆրիկայում, Կոսովոյում և Արևելյան Թիմորում, հնարավորություն է ընձեռել մարդկանց մասնակցելու ազատ և արդար ընտրությունների: Աշխարհի ավելի քան 90 երկրներում, մասնավորապես Աֆղանստանում, Իրաքում և Բուրունդիում, այդ պետությունների պատմության վճռորոշ պահերին ՄԱԿ-ի մասնագետները մատուցել են խորհրդատվություն և օժանդակել ընտրություններին վերաբերող հարցերում, ներառյալ ընտրությունների արդյունքների վերահսկումը:

3 Մարդու իրավունքների խթանում

Այն պահից ի վեր, ինչ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1948թ. ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Միավորված ազգերի կազմակերպությունն օժանդակել է քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող բազմաթիվ և բազմակողմանի համաձայնագրերի ընդունմանը: ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմիններին հաջողվել է անհատական բողոքների հետաքննության շնորհիվ միջազգային հանրության ուշադրությունը սևեռել կտտանքների, անհետացման և կամայական ազատազրկման դեպքերի վրա և ճնշում գործադրել որոշ կառավարությունների վրա, որպեսզի բարելավեն իրենց երկրներում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող փաստաթղթերն ու ընթացակարգերը:

Հավեն Դոնբասում / ՄԱԿ-ՀՀՀ / ՀԱՏ

Խաղաղ հանգիստ գոյակցություն / ՀՀ զինված ուժերի

4 Խաղաղության և անվտանգության պահպանում

2005 թվականի դրությամբ Միավորված ազգերի կազմակերպությունը խաղաղապահների և դիտորդների 60 առաքելություն է իրականացրել աշխարհի ամենաթեժ կետերում: Այդպիսով ՄԱԿ-ին հաջողվել է հաստատել հնարավորինս հանդարտ իրավիճակ՝ բանակցությունների գործընթաց սկսելու համար և փրկել միլիոնավոր մարդկանց կյանքը՝ թույլ չտալով, որ նրանք պատերազմի զոհ դառնան: Ներկայումս աշխարհում գործում է խաղաղապահ 16 առաքելություն:

5 Խաղաղարարություն

1945 թվականից ի վեր Միավորված ազգերի կազմակերպությունն աջակցել է խաղաղության հաստատման մոտ 170 բանակցությունների, որոնցով վերջ է տրվել տարածաշրջանային հակամարտություններին: Այդ գործունեության ցայտուն օրինակներ են իրան-իրաքյան պատերազմի ավարտը, Աֆղանստանից խորհրդային ռազմաուժերի դուրսբերմանը նպաստելը, էլ Սալվադորում և Գվատեմալայում քաղաքացիական պատերազմների ավարտը: Անխուսափելի պատերազմները կանխելու նպատակով ՄԱԿ-ը մշտապես գործի է դրել խաղաղ դիվանագիտությունը:

6 Շրջակա միջավայրի պահպանություն

Միավորված ազգերի կազմակերպությունն աշխատում է լուծել համընդհանուր բնապահպանական հիմնախնդիրներ: Որպես փոխհամաձայնության հաստատման և բանակցությունների միջազգային ֆորում՝ ՄԱԿ-ը զբաղվում է այնպիսի հիմնախնդիրներով, ինչպիսիք են բնակլիմայական փոփոխությունը, օզոնի շերտի քայքայումը, թունավոր արտանետումները, անտառների և կենսաբանական տարատեսակների կորուստը, օդի և ջրի աղտոտումը: Քանի դեռ այս հիմնախնդիրները չեն լուծվել, համաշխարհային շուկաներն ու տնտեսությունը չեն կարող տևական կայունություն պահպանել, քանզի բնապահպանական կորուստների հետևանքով քայքայվում է այն բնական «կապիտալը», որի վրա են հիմնված զարգացումն ու մարդկային գոյատևումը:



7 Միջուկային զենքի տարածման կանխում

Իր կառույցներից մեկի՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ/IAEA) միջոցով ՄԱԿ-ը նպաստում է, որ միջուկային տեխնոլոգիաներից օգտվող ոչ մի երկիր գաղտնի միջուկային զենք չարտադրի: Աշխարհի ավելի քան 70 երկրներում ԱԷՄԳ-ն հսկում է միջուկային հարյուրավոր օբյեկտներ: Այսօր աշխարհի 152 պետությունների հետ կնքվել և գործում են միջուկային վերահսկման 237 համաձայնագիր:

8 Ինքնորոշման և անկախության խթանում

Երբ 1945թ. հիմնադրվեց ՄԱԿ-ը, 750 միլիոն մարդ, այսինքն՝ երկրագնդի բնակչության գրեթե մեկ երրորդը, ապրում էր ինքնորոշման իրավունքից զուրկ՝ կախյալ գաղութային տարածքներում: Միավորված ազգերի կազմակերպությունը կարևոր դեր խաղաց՝ անկախություն բերելով ավելի քան 80 երկրների, որոնց ժողովուրդներն այժմ անկախ են:

9 Պատերազմի հանցագործների դատապարտում

Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի հարցերով ստեղծված ՄԱԿ-ի քրեական դատարանները դատապարտել են պատերազմի հանցագործներին և հասել նրանց բանտարկությանը, նախադեպի հիման վրա մշակել կարևոր փաստաթուղթ ցեղասպանության ու մարդու իրավունքների վերաբերյալ և ապահովել արդարադատություն այնպիսի միջոցներով, որոնք ամենայն ընդունելություն են գտել տուժած շրջանների բնակչության շրջանում:

10 Ազգային խտրականության դադարեցում Հարավային Աֆրիկայում

Միավորված ազգերի կազմակերպությունը չափազանց կարևոր դեր խաղաց Հարավային Աֆրիկայում ռասայական մեկուսացմանը (ապարտեիդ) վերջ տալու գործում՝ ձեռնարկելով մի շարք լայնածավալ միջոցառումներ՝ սկսած զենքի նկատմամբ կիրառվող արգելքից մինչև խտրականացված սպորտային խաղերի դեմ ընդունված կոնվենցիան: 1994 թվականի ընտրությունները, որոնց իրավահավասար հիմունքներով մասնակցում էին բոլոր հարավաֆրիկացիները, հիմք դարձան բազմառասայական կառավարության ձևավորման և հաստատման համար:

Լուսանկար ՀՏԱ / Photo: HTA

«Այսօր մենք այստեղ ենք ողջունելու Միավորված ազգերի կազմակերպությանը և իր անդամ պետություններին, թե՛ անհատապես, թե՛ բոլորին միասին, իրենց ուժերը մեր ժողովրդի լայն զանգվածների ընդհանուր պայքարին միացնելու համար, որը իրականացրեց մեր ազատագրումն ու ետ մղեց ռասիզմի սահմանները:»

- ՆԱԽԱԳԱՀ ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱՅԻ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ուղղված 1994թ. ելույթից, երբ առաջին ազատ բազմառասայական ընտրությունները կայացան Հարավային Աֆրիկայում:

11 Միջազգային օրենքների ամրապնդում

Միավորված ազգերի կազմակերպության ջանքերով մարդու իրավունքների, ահաբեկչության, միջազգային հանցագործության, փախստականների, զինաթափման, սպառման ապրանքների և օվկիանոսների վերաբերյալ ավելի քան 500 բազմակողմանի պայմանագիր է օրենքի ուժ ստացել:

Ինկոմ ԻՏԷ / Լուսանկարչուհի՝ Զրուցիրն

12 Մարդասիրական օգնության ապահովում փախստականների համար

1951թ. մինչ օրս պատերազմի, սովի կամ հետապնդումների հետևանքով ապաստան փնտրող ավելի քան 50 միլիոն փախըստական է օգնություն ստացել ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակից: Դա շարունակական գործընթաց է, որը հաճախ ընդգրկում է նաև այլ գործակալություններ: Կազմակերպությունը փորձում է գտնել այդ հիմնահարցի երկարաժամկետ կամ «հարատև» լուծումներ՝ օժանդակելով փախստականների հայրենադարձության գործընթացին, եթե երաշխավորվում է նրանց անվտանգությունը, օգնելով փախըստականներին ինտեգրվել իրենց ապաստան տրամադրող երկրների կյանքին կամ վերաբնակություն հաստատել որևէ երրորդ երկրում: Աշխարհում այսօր 19 միլիոնից ավելի փախստականներ, ապաստան որոնող կամ ներքին տեղահանության ենթարկված անձինք կան, հիմնականում կանայք և երեխաներ, որոնք ՄԱԿ-ից պարեն, ապաստան, բուժօգնություն, կրթություն և հայրենադարձության օժանդակություն են ստանում:

13 Սովի ու գյուղական աղքատության նվազեցում նոր զարգացող երկրներում

ՄԱԿ-ի Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (ԳԶՄՀ/IFAD) մշակել է վարկերի տրամադրման մի համակարգ՝ հաճախ շատ փոքր գումարներ կազմող, որը գյուղական բնակչությանը հնարավորություն է տալիս հաղթահարելու ծայրահեղ աղքատությունը: 1978թ. իր գործունեությունն սկսելուց մինչ օրս ԳԶՄՀ-ն ավելի քան 8,5 միլիարդ դոլարի ներդրում է կատարել 676 նախագծերում ու ծրագրերում, որոնց շահառուների թիվն անցնում է 250 միլիոնից: Հիմնադրամի միջոցները գոյանում են պետությունների կողմից տրամադրվող կամավոր ներդրումներից:

ISM Palestine

14 Օգնություն Պաղեստինի փախստականներին

Մինչ համաշխարհային հանրությունը ձգտում է հարատև խաղաղություն հաստատել իսրայելցիների և պաղեստինցիների միջև, ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալությունը (ՄԱՕԱԳ/UNRWA)՝ մարդասիրական օգնության և զարգացման այդ հաստատությունը, օգնություն է տրամադրել պաղեստինյան փաստականների չորս սերունդների կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների, միկրոֆինանսավորման և արտակարգ օժանդակության բնագավառներում: Այսօր Մերձավոր Արևելքի ավելի քան 4 միլիոն փախստականներ գրանցված են ՄԱՕԱԳ-ում:

15 Հատուկ ուշադրություն Աֆրիկայի զարգացմանը

Աֆրիկան շարունակում է մնալ Միավորված ազգերի կազմակերպության առաջնահերթ խնդիրներից մեկը: 1986թ. ՄԱԿ-ը հրավիրեց հատուկ նստաշրջան՝ միջազգային օժանդակության կոչ անելով Աֆրիկայի տնտեսության վերականգնման ու զարգացման համար: 2001թ. աֆրիկյան պետությունների ղեկավարներն ընդունեցին մայրցամաքի սեփական ծրագիրը՝ Աֆրիկայի զարգացման նոր գործընկերությունը, որը 2002թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվեց որպես միջազգային օգնությունը դեպի Աֆրիկա ուղղորդելու հիմնական կառույց: Աֆրիկյան մայրցամաքը ստանում է ՄԱԿ-ի համակարգի զարգացման հատկացումների 33 տոկոսը՝ տարածաշրջանների ամենամեծ բաժինը: ՄԱԿ-ի բոլոր գործակալություններն Աֆրիկայի օգնության հատուկ ծրագրեր ունեն:

16 Կանանց բարեկեցության խթանում

Միավորված ազգերի կազմակերպությունը մշտապես օժանդակել է կանանց հավասարության և բարեկեցության խթանմանը: ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամը (ՄԱԿԶՀ/UNIFEM) և Կանանց առաջխաղացման ուսումնական և գիտահետազոտական միջազգային ինստիտուտը (ԿԱՈՒԳՄԻ/INSTRAW) ավելի քան 100 երկրում նպաստել են կանանց կյանքի բարելավմանն ու նրանց իրավունքների առաջմղմանը: ԿԱՈՒԳՄԻ-ն իրականացնում է հետազոտական աշխատանքներ և կազմակերպում ուսումնական դասընթացներ, իսկ ՄԱԿԶՀ-ն աջակցում է այնպիսի ծրագրերի, որոնց նպատակն է վերացնել կանանց նկատմամբ բռնությունը, կանխել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածումը և խթանել կանանց տնտեսական ապահովությունը, օրինակ՝ մեծացնել կանանց աշխատանքի ընդունման հնարավորությունները և նրանց իրավունքները հողի ու ժառանգության նկատմամբ: ՄԱԿ-ի բոլոր գործակալությունները պետք է հաշվի առնեն կանանց կարիքները:

17 Կանանց իրավունքների պաշտպանություն

ՄԱԿ-ի երկարաժամկետ հեռանկարային խնդիրներից է կանանց կենսակերպի բարելավումը և սեփական կյանքը կառավարելու առավել մեծ իրավունքների ընձեռումը: ՄԱԿ-ի ջանքերով 1975թ. Մեխիկոյում կազմակերպվեց պատմության մեջ առաջին Կանանց համաշխարհային խորհրդաժողովը, որը ՄԱԿ-ի հովանավորությամբ կազմակերպված Կանանց միջազգային տասնամյակի այլ խորհրդաժողովների հետ մեկտեղ սահմանեց կանանց իրավունքների առաջխաղացման օրակարգը: 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որը վավերացվեց աշխարհի 180 պետությունների կողմից, նպաստեց կանանց իրավունքների խթանմանն ամբողջ աշխարհում:

Ինչպես հայտնի է, ՕԵԿ-ի

18 Մաքուր խմելու ջրի ապահովում

ՄԱԿ-ի՝ 1981-1990 թվականների ջրի առաջին տասնամյակի ընթացքում ավելի քան 1 միլիարդ մարդ իր կյանքում առաջին անգամ հնարավորություն ստացավ օգտվելու ապահով խմելու ջրից: 1990-2002 թվականներին ևս 1,1 միլիարդ մարդու ապահով խմելու ջրից օգտվելու հնարավորություն ընձեռվեց: 2003թ. անցկացվող Քաղցրահամ ջրի միջազգային տարին մեծապես նպաստեց այդ թանկագին բնական պաշարի պահպանության կարևորության մասին իրազեկության բարձրացման գործին: Ջրի միջազգային երկրորդ տասնամյակը, որ նախատեսված է անցկացնել 2005-2015 թվականներին, նպատակ ունի կիսով չափ նվազեցնել ապահով խմելու ջրից օգտվելու հնարավորություն չունեցող մարդկանց թիվը:

ԱՀԿ / ՀՏՎ արխիվ

19 Մանկական պոլիոմիելիտի վերացում

Պոլիոմիելիտի համընդհանուր վերացման նախաձեռնության արդյունքում, որն աշխարհում մինչ օրս ձեռնարկված խոշորագույն առողջապահական ծրագիրն է, աշխարհի բոլոր երկրներում, բացի վեցից՝ Աֆղանստանից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Նիգերից, Նիգերիայից և Պակիստանից, պոլիոմիելիտը հիմնովին վերացել է: Այդ նախաձեռնության շնորհիվ, որը գլխավորում էին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, Միջազգային Rotary կազմակերպությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների Հիվանդությունների հսկողության և կանխարգելման կենտրոնները, շուրջ 5 միլիոն երեխաներ, որոնք անդամալույծ կլինեին, եթե չլիներ այս ծրագիրը, այսօր քայլում են: Այդ հիվանդությունը, որ աշխարհի 125 երկրներում անդամալույծ է դարձրել անհամար երեխաների, այլևս արմատապես վերանալու եզրին է:

20 Արձագանք ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին

Միավորված ազգերի կազմակերպության ՄԻԱՎ/ՁԻԱՀ համատեղ ծրագիրը (ՄԱՁԻԱՀ /UNAIDS) համակարգում է աշխարհում ձեռնարկվող գործողությունները մի համաճարակի դեմ, որից տառապում է շուրջ 40 միլիոն մարդ: Ծրագիրը գործում է 130-ից ավելի երկրներում՝ ապահովելով հիվանդության կանխարգելման և բուժման ծառայությունների համընդհանուր մատչելիությունը, մեղմացնելով անհատների ու համայնքների խոցելիությունը վարակի նկատմամբ և թեթևացնելով համաճարակի ազդեցությունը: ՄԱՁԻԱՀ ծրագիրը միավորում է ՄԱԿ-ի 10 հովանավոր կազմակերպությունների ջանքերն ու փորձառությունը:

21 Կարմրուկի վերացում

Տասներեքամյա պայքարից հետո վերջապես 1980թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը հաջողվեց մոլորակի երեսից իսպառ վերացնել ծաղիկ հիվանդությունը: Դրա վերացման, ուստի և պատվաստման ու վերահսկողության աշխատանքների ավարտման շնորհիվ գոյացած առողջապահական խնայողությունները տարեկան կտրվածքով կազմում են շուրջ 1 միլիարդ դոլար, որը երեք անգամ գերազանցում է այդ աղետալի հիվանդության վերացմանն ուղղված բուն ծախսերը:

22 Պայքար պարազիտային հիվանդությունների դեմ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաձեռնած ծրագրի արդյունքում Արևմտյան Աֆրիկայի 11 պետություններում հաջողվեց վերացնել գետային կուրություն հիվանդությունը, որի շնորհիվ 11 միլիոն երեխաներ փրկվեցին կուրությունից, իսկ 25 միլիոն հեկտարի հասնող բերրի հողատարածքներ ազատվեցին գյուղատնտեսական աշխատանքների համար: ՄԱԿ-ի գործակալությունների ջանքերի շնորհիվ 1991թ. Հյուսիսային Աֆրիկայում վերջ տրվեց գարշելի պտուտաորդին՝ մի մակաբույծի, որը սնվում է մարդու և կենդանիների մսով: ՄԱԿ-ի նախաձեռնությամբ իրականացվող այլ ծրագրերի արդյունքում վերջ տրվեց գվինեական որդից ծագող և այլ արևադարձային հիվանդությունների:

23 Համաճարակների տարածման կանխում

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն օգնել է կանխել ատիպիկ թոքաբորբի (SARS) տարածումը, որը կարող էր խլել տասնյակ հազարավոր մարդկանց կյանքեր: Հետևելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ/WHO) տագնապի ազդանշանին և արտակարգ իրավիճակներում ճանապարհորդողների համար նախատեսված խորհուրդների գրքույկին, որ թողարկվեց 2003թ. մարտին, գրեթե բոլոր երկրները, որտեղ արձանագրվել էին SARS-ի դեպքեր, կարողացան կանխել հիվանդության հետագա տարածումը կամ ապահովել վարակի դեպքերի թվի խիստ ցածր ցուցանիշ: Ամեն տարի ԱՀԿ-ն քննում է համաճարակների բռնկման 200-250 նոր դեպք: Ամենամյա այդ բռնկումներից միջին հաշվով 5-15-ի դեպքում անհրաժեշտ է լինում լուրջ միջազգային միջամտություն ձեռնարկել:

24 Համընդհանուր պատվաստումների կարևորում

Վերջին երկու տասնամյակների ընթացքում պատվաստումը փրկել է 20 միլիոնից ավելի կյանք: ԱՀԿ-ի և ՄԱՄՀ-ի ջանքերի շնորհիվ պատվաստումների թիվը 1970-ականների սկզբի 5 տոկոսից այսօր հասել է մինչև 75 տոկոսի պատվաստման միջոցով կանխվող վեց լուրջ հիվանդությունների դեմ՝ պոլիոմիելիտի, փայտացման, կարմրուկի, կապույտ հազի, դիֆթերիայի և տուբերկուլյոզի: 1999-ից մինչև 2005 թվականն ընկած ժամանակահատվածում շուրջ 50 տոկոսով նվազել է կարմրուկից մահացության դեպքերի թիվը: Փայտացման դեմ պատվաստումները փրկել են հարյուրհազարավոր մայրերի ու նորածինների կյանք, իսկ 104 զարգացող երկրներում այդ հիվանդությունն իսպառ վերացել է:

Խիսմա ՀՏԷ / Ցամաքային ցնցում

25 Մանկական մահացության նվազեցում

1960-ականների սկզբներին մինչև հինգ տարեկան յուրաքանչյուր 5 երեխայից մեկը մահանում էր: ՄԱԿ-ի գործակալությունների՝ ջրազրկման դեմ օրալ թերապիայի, ջրի և կոյուղու որակի բարելավման, ինչպես նաև առողջապահական և սնուցման այլ ձեռնարկումների միջոցով զարգացող երկրներում մինչև 2002 թվականը երեխաների մահացության տեսակարար կշիռն անկում է ապրել՝ հասնելով 12:1 հարաբերության: Այժմ ՄԱԿ-ի նպատակն է մինչև 5 տարեկան երեխաների մահացության 1990 թվականի ցուցանիշը մինչև 2015 թվականը նվազեցնել երկու երրորդով:

26 Բիզնեսի համար նախադրյալների ստեղծում

ՄԱԿ-ը բեղմնավոր աշխատանք է կատարել նաև բիզնեսի զարգացման բնագավառում: Բանակցությունների ճանապարհով սահմանելով միջազգայնորեն ընդունված տեխնիկական չափորոշիչներ այնպիսի տարատեսակ ոլորտներում, ինչպիսիք են վիճակագրությունը, առևտրի օրենսդրությունը, մաքսային ընթացակարգերը, մտավոր սեփականությունը, օդագնացությունը, նավագնացությունը և հեռահաղորդակցությունը, Միավորված ազգերի կազմակերպությունը համաշխարհային տնտեսության համար ստեղծել է «փափուկ ենթակառուցվածք»՝ հեշտացնելով տնտեսական գործունեությունը և կրճատելով գործառնական ծախսերը: ՄԱԿ-ը նախադրյալներ է ստեղծել զարգացող տնտեսություններում ներդրումներ կատարելու համար՝ աջակցելով քաղաքական կայունությանը և պատշաճ կառավարման գործելակերպին, պայքարելով կոռուպցիայի դեմ և քարոզելով առողջ տնտեսական քաղաքականություն և բիզնեսի զարգացման համար նպաստավոր օրենսդրական դաշտ:

27 Նոր զարգացող երկրների արդյունաբերության աջակցում

ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ/UNIDO) ջանքերի շնորհիվ Միավորված ազգերի կազմակերպությունը ծառայել է որպես «միջնորդ» հյուսիս-հարավ և հարավ-հարավ արդյունաբերական համագործակցության համար՝ առաջ տանելով ձեռներեցության, ներդրումների, տեխնոլոգիաների փոխանցման, ծախսարդյունավետ և կայուն արդյունաբերական զարգացման գաղափարները: Կազմակերպությունն օգնել է անդամ պետություններին սահուն կերպով անցնելու գլոբալացման գործընթացը և հետևողականորեն նվազեցնել աղքատությունը:



Imagine ESE

28 Օգնություն աղետներից տուժածներին

Տարերային աղետների դեպքում կամ բարդ արտակարգ իրավիճակներում ՄԱԿ-ը համակարգում և համախմբում է տուժածներին ցուցաբերվող օգնությունը: Աշխատելով Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային կազմակերպության, ինչպես նաև մարդասիրական օգնությամբ զբաղվող այլ խոշորագույն կազմակերպությունների ու դոնորների հետ՝ ՄԱԿ-ի օպերատիվ գործակալությունները տեղ են հասցնում այնքան սպասված մարդասիրական օգնությունը: ՄԱԿ-ի կոչով ամեն տարի արտակարգ իրավիճակներում օգնության նպատակով հանգանակվում է ավելի քան 2 միլիարդ դոլար:

29 Բնական աղետների ազդեցության նվազեցում

Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպության (ՕՀԿ/WMO) աշխատանքի շնորհիվ միլիոնավոր մարդիկ փրկվել են բնական և մարդածին աղետների կործանարար ազդեցությունից: ՕՀԿ-ի վաղաժամ ահազանգման համակարգի շնորհիվ, որի մեջ մտնում են հազարավոր մակերևութային մոնիտորներ և արբանյակներ, հնարավոր է դարձել առավել մեծ ճշգրտությամբ կանխատեսել կլիմայական պայմանների հետ կապված աղետները, ստանալ տեղեկատվություն նավթի արտահոսքերի տարածման ծավալների, ինչպես նաև քիմիական ու ռադիոակտիվ նյութերի արտահոսքերի մասին, կանխագուշակել երկարատև երաշտները: Այդ համակարգի օգնությամբ հնարավոր է դարձել երաշտից տուժած շրջաններին տրամադրվող սնունդը բաշխել առավել մեծ արդյունավետությամբ:

30 Օգնություն ցունամիից տուժածներին

2004թ. դեկտեմբերի 26-ին Հնդկական օվկիանոսում տեղի ունեցած կործանարար ցունամիից հետո 24 ժամվա ընթացքում ՄԱԿ-ի աղետների գնահատման և համակարգման խմբերն արդեն ուղարկվել էին այն շրջանները, որտեղ տարերային աղետը թողել էր ամենամեծ ավերածությունները: Միավորված ազգերի կազմակերպությունն իսկույն ևեթ անցավ գործողությունների՝ օգնելով աղետից փրկվածներին, սնունդ բաժանելով ավելի քան 1,7 միլիոն մարդկանց, ապաստան տալով իրենց տները կորցրած շուրջ 1,1 միլիոն մարդկանց, խմելու ջուր մատակարարելով 1 միլիոնից ավել փրկվածների, կարմրուկի դեմ պատվաստելով ավելի քան 1,2 միլիոն երեխաների: Եվ այս ամենը փրկարարական գործողությունների առաջին 6 ամիսների ընթացքում: Մարդասիրական օգնության անհապաղ և արդյունավետ կազմակերպման շնորհիվ ավերածության առաջին հարվածին հետևող օրերի ընթացքում լրացուցիչ զոհեր չեղան և համաճարակի բռնկումը կանխվեց:

31 Օզոնի շերտի պահպանություն

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱՇՄԾ/UNEP) և Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպությունը (ՕՀԿ) հսկայածավալ աշխատանք են կատարել երկիր մոլորակի օզոնի շերտին հասցված վնասի մասին մարդկությանը ահազանգելու և զգոնացնելու գործում: «Մոնրեալի արձանագրություն» կոչվող հանրահայտ համաձայնագրի հիման վրա աշխարհի պետություններն աստիճանաբար արտադրությունից և գործածությունից հանում են այն քիմիական նյութերը, որոնք առաջ են բերում օզոնի շերտի քայքայում: Դրանք փոխարինվում են ավելի անվնաս նյութերով: Այս նախաձեռնությունը կարող է միլիոնավոր մարդկանց փրկել մաշկի քաղցկեղով հիվանդանալուց, որը չափից ավելի ուլտրամանիշակագույն ճառագայթման ենթարկվելու հետևանք է:

32 Կլիմայի փոփոխությունների դիմակայում

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՀ/GEF) զբաղվում է այնպիսի ծրագրերի ֆինանսավորմամբ, որոնք օգնում են զարգացող երկրներին դիմակայել կլիմայի փոփոխություններին: Կառույցը հիմնադրվել է 1991թ. և հանդիսանում է մոլորակի շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ֆինանսավորման խոշորագույն եզակի աղբյուրը: ԳԷՀ-ը ֆինանսավորում է նաև մոլորակի կենսաբազմազանության պահպանության, օզոնի շերտի պահպանման, միջազգային ջրերի մաքրման, հողի դեգրադացիայի դեմ պայքարի և թունավոր օրգանական աղտոտիչների աստիճանական դուրսմղման ծրագրերը: 1991 թվականից ի վեր ԳԷՀ-ը տրամադրել է 5,7 միլիարդ դոլարի հասնող ընդհանուր ծավալով դրամաշնորհներ (այդ թվում՝ ավելի քան 6000 փոքր դրամաշնորհներ ոչ կառավարական կազմակերպություններին ու համայնքային խմբերին) և կոչ արել ուրիշ գործընկերների 18,8 միլիարդ դոլարի չափով մասնակցել համատեղ ֆինանսավորմանը: ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը և Համաշխարհային բանկը հանդիսանում են ԳԷՀ-ի ծրագրերի իրականացման գործակալություններ:



ՄԱԿ / ՀՏԿ արխիվ

33 Ականազերծում

Միավորված ազգերի կազմակերպությունը առաջնորդում է շուրջ 30 երկրներում (այդ թվում՝ Աֆղանստանում, Անգոլայում, Բոսնիայում և Հերցոգովինայում, Իրաքում, Մոզամբիկում և Սուդանում) անցկացվող ականազերծման միջազգային մասշտաբի միջոցառումները: Ականներից ամեն տարի դեռևս զոհվում և անդամալույծ են դառնում հազարավոր անմեղ մարդիկ: ՄԱԿ-ը ջանում է նաև պաշտպանել մարդկանց վտանգից, օգնել ականներից վիրավորվածներին՝ ապրելու ինքնուրույն կյանքով, աջակցել պետություններին՝ ոչնչացնելու ականների պաշարները:

ադամանդ ՀՍԵ

34 Մթերքի մատակարարում ամենակարիքավորներին

Ամեն տարի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ /WFP)՝ աշխարհի՝ մարդասիրական օգնությամբ զբաղվող խոշորագույն կազմակերպությունը, օգնություն է հասցնում 80 երկրների շուրջ 90 միլիոն սովյալների, այդ թվում՝ փախստականների ու ներքին տեղահանման ենթարկվածների մի ստվար մասի: ՊՀԾ-ի պարենային օգնությունը նախատեսված է կանանց և երեխաների հատուկ կարիքները բավարարելու համար, քանզի այդ խումբն առավել հաճախ է ենթարկվում սովահարության վտանգին: Դպրոցական պարենային ծրագրերի ընթացքում ան-վճար ճաշ է տրամադրվել ավելի քան 17 միլիոն դպրոցականների, ընդ որում մեկ ճաշի արժեքը կազմել է ընդամենը 19 ամերիկյան ցենտ: Կազմակերպության նյութատեխնիկական ապահովման գործողություններն ընդգրկում են տեխնոլոգիական լայնածավալ սպեկտր՝ սկսած պարենամթերքները ավանակների ու գրաստների վրա բարձելուց մինչև երկրի արբանյակների հսկման համակարգերի տեղադրումը: Անցած չորս տասնամյակների ընթացքում ՊՀԾ-ն 78,3 միլիոն մետրային տոննա պարենային օգնություն է հասցրել աշխարհի ամենաչքավոր երկրների շուրջ 1,4 միլիարդ բնակիչների: Դա մոտ 33,5 միլիարդ դոլարի ներդրում է:

35 Պայքար սովի դեմ

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ/FAO) առաջնորդում է սովի դեմ պայքարի միջազգային մասշտաբի գործողությունները: Իր գործունեությունը ծավալելով ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում, ՊԳԿ-ն ծառայում է որպես չեզոք ֆորում, որտեղ հավասար իրավունքներով կարող են հանդիպել բոլոր ազգերը՝ բանակցելու, համաձայնագրեր կնքելու և վիճարկելու առկա ռազմավարությունները: ՊԳԿ-ը օգնում է նաև զարգացող պետություններին արդիականացնել և կատարելագործել գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և ձկնաբուծությունը, ինչպես նաև բարորակ սնունդ մատակարարել բոլորին:

36 Ձկնորսության չարաշահման կանխում

Համաշխարհային ձկնային պաշարի 16 տոկոսը շահագործման մեջ չարաշահվում է, իսկ 8 տոկոսը՝ զգալիորեն սպառվել է: Ներկայումս փորձեր են արվում այդ պաշարը վերականգնելու ուղղությամբ: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը հսկողություն է իրականացնում բաց ծովում ձկնորսական արտադրության նկատմամբ և ահազանգում ձկնորսության չարաշահման վտանգները կանխելու նպատակով: Այդ հիմնահարցը լուծելու համար ՊԳԿ-ն և իր անդամ պետությունները համատեղ կարգով մշակել և 1995թ. ընդունել են «Վարքականոն պատասխանատու ձկնորսական միավորումների համար»:

37 Թունաքիմիկատների արգելում

Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիայի նպատակն է աշխարհն ազատել մի շարք խիստ վտանգավոր թունաքիմիկատներից: 2001թ. ընդունված այս կոնվենցիայի թիրախն են 12 վտանգավոր պեստիցիդներ և արդյունաբերական քիմիկատներ, որոնք կարող են մարդկանց մահվան պատճառ դառնալ, վնաս հասցնել նյարդային և իմունային համակարգերին, առաջացնել քաղցկեղ և վերարտադրողական ֆունկցիայի խանգարումներ, ազդել երեխաների զարգացման վրա: ՄԱԿ-ի կոնվենցիաներն ու գործողությունների ծրագրերն օգնում են պահպանել կենսաբազմազանությունը, հակազդել կլիմայի անբարենպաստ փոփոխություններին, պահպանել անհետացման վտանգի եզրին գտնվող կենսատեսակները, պայքարել անապատացման դեմ, մաքրել տարածաշրջանային ծովերը և կանխել վտանգավոր արտանետումների անդրսահմանային շարժումը:

38 Սպառողների առողջության պահպանում

Շուկայում վաճառվող սննդամթերքի անվտանգությունն ապահովելու նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, անդամ պետությունների հետ համագործակցելով, սահմանել են միջազգային չափորոշիչներ (ստանդարտներ) ավելի քան 200 պարենային ապրանքատեսակների համար, անվտանգության եզրագծեր՝ սննդի ավելի քան 3000 կոնտեյներների համար, ինչպես նաև կանոնակարգեր՝ սննդամթերքի մշակման, փոխադրման և պահեստավորման համար: Պիտակավորման և ապրանքների նկարագրության չափորոշիչների սահմանման նպատակն է սպառողներին զերծ պահել ամեն տեսակ թյուրիմացություններից:

39 Պայքար ահաբեկչության դեմ

ՄԱԿ-ը սահմանել է միջազգային ահաբեկչության դեմ պայքարի օրենսդրական դաշտը: ՄԱԿ-ի հովանու տակ բանակցվել են համաշխարհային օրենսդրության 13 իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ համաձայնագրեր պատանդ վերցնելու, ինքնաթիռների առևանգման, ահաբեկչական ռմբակոծումների, ահաբեկչության ֆինանսավորման և, բոլորովին վերջերս, միջուկային ահաբեկչության դեմ: Մինչև 2005թ. հունիս ամիսը 63 պետություններ վավերացրել էին վերոհիշյալ բոլոր համաձայնագրերը: Ներկայումս մշակման փուլում է գտնվում ահաբեկչության դեմ մի նոր բազմակողմանի կոնվենցիա: Միավորված ազգերի կազմակերպության Հակաահաբեկչության հանձնախումբը հսկում է, թե ինչպես են պետությունները կատարում սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումներից հետո ստանձնած իրենց պարտավորությունները և համակարգում հակաահաբեկչական համագործակցությունն ամբողջ աշխարհում: ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների կանխման գրասենյակը (ԹՀԿԳ/ODC) և ՄԱԿ-ի այլ գործակալություններ օգնել են ավելի քան 100 պետությունների՝ ամրապնդելու ահաբեկչության դեմ պայքարելու իրենց կարողությունը:

Խնամքի մեջ է մայրը

40 Վերարտադրողական և մայրական առողջության խթանում

Ընտանիքի պլանավորման կամավոր ծրագրերի միջոցով ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը (ՄԱԲՀ/UNFPA), պաշտպանելով անհատի՝ քանի երեխա և երբ ունենալու որոշման իրավունքը, օգնել է մարդկանց՝ կատարել իրազեկ ընտրություն և հնարավորություն ընձեռել ընտանիքներին, հատկապես կանանց, վերահսկելու իրենց ապրելակերպը: Արդյունքն այն է, որ զարգացող երկրներում կանայք ավելի քիչ են ծննդաբերում (1960թ. 6 երեխայի ցուցանիշն այսօր իջել է մինչև 3-ի) և դանդաղեցնում մոլորակի բնակչության անցանկալի աճը: 1969թ., երբ ՄԱԲՀ-ն տակավին նոր էր սկսել իր գործունեությունը, ամուսնացած զույգերի ընդամենը 20 տոկոսն էր կիրառում ընտանիքի պլանավորման պրակտիկան: Այդ ցուցանիշն այսօր հասել է 61 տոկոսի: ՄԱԲՀ-ն իր մի շարք գործընկերների հետ նաև մասնագիտացված օգնություն է ապահովում ծննդաբերության ժամանակ, բարձրակարգ մանկաբարձական օգնություն՝ արտակարգ իրավիճակներում և կազմակերպում ընտանիքի պլանավորման ընդլայնված ծրագրեր՝ մայրերի մահացության դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով:

41 Միջազգային խոշորամասշտաբ տարածայնությունների իրավական լուծումների իրականացում

Տալով իր եզրակացություններն ու խորհրդատվական կարծիքը՝ Արդարադատության միջազգային դատարանն օգնել է հարթել միջազգային մասշտաբի բազմաթիվ տարածայնություններ, այդ թվում՝ տարածքային վեճեր, դիվանագիտական հարաբերություններ, ապահովել պատանդների ազատագրումը, ապաստանի իրավունքը և տնտեսական իրավունքը:

Վիկտոր Դիշչեգենյան / ՀՏՄ արխիվ

42 Միջազգային առևտրական կապերի բարելավում

ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը (ՄԱԱԶՀ / UNCTAD) աջակցում է զարգացող երկրներին՝ բանակցելու առևտրական համաձայնագրերի շուրջ և ստանալու արտոնյալ պայմաններ արտահանման համար: Միջազգային ապրանքային պայմանագրերի շրջանակներում ՄԱԱԶՀ-ն մասնակցել է մի շարք բանակցությունների՝ զարգացող երկրների համար ապահովելով արդարացի գնային պայմաններ, բարելավել է այդ երկրների առևտրի ենթակառուցվածքների արդյունավետությունը, այլ միջոցներով օգնել նրանց՝ բազմազանեցնելու իրենց արտադրանքը և ինտեգրվելու միջազգային տնտեսությանը:

43 Տնտեսական բարեփոխումների խթանում

Համաշխարհային բանկը (ՀԲ/WB) և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ/IMF) օգնել են բազմաթիվ երկրների՝ բարելավելու տնտեսական կառավարման ոլորտը, տրամադրել են ժամանակավոր ֆինանսական աջակցություն՝ հաղթահարելու վճարումների բալանսի հետ կապված դժվարությունները, կազմակերպել են վերապատրաստման դասընթացներ ֆինանսական հարցերով զբաղվող պետական պաշտոնյաների համար:

44 Համաշխարհային օվկիանոսում կայունության և կարգուկանոնի հաստատում

ՄԱԿ-ը մի միասնական կոնվենցիայով գլխավորել է օվկիանոսների օգտագործման հարցերի կարգավորման միջազգային ջանքերը: Ծովային օրենքի մասին 1982թ. ՄԱԿ-ի կոնվենցիան, որն ընդունվել է աշխարհի գրեթե բոլոր երկրներում, պատմության մեջ առաջին անգամ միջազգային օրենսդրական դաշտ է ստեղծում օվկիանոսների մակերևութային և անդրջրյան ամեն տեսակի գործողությունների կարգավորման համար: Կոնվենցիայով սահմանվում են հատուկ կանոններ ծովային գոտիների որոշման, պետական ծովային օրենսդրությունների համար, բարձր ծովերում ծովագնացության համար, մերձափնյա և այլ պետությունների իրավունքներն ու պարտականությունները, օվկիանոսի միջավայրը պահպանելու և պաշտպանելու հետ առընչվող պարտավորությունները, օվկիանոսում կատարվող գիտական հետազոտությունների ընթացքում համագործակցության պայմաններն ու պահանջները և օվկիանոսի կենդանի ռեսուրսների պահպանության և խնայողական օգտագործման պահանջները:

45 Ծովային և օդային երթևեկության բարելավում

ՄԱԿ-ի գործակալությունները պատասխանատու են ծովային և օդային երթևեկության անվտանգության չափորոշիչների սահմանման համար: ՄԱԿ-ի Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ՔԱՄԿ/ICAO) մեծ ներդրում ունի օդային երթևեկությունը ճանապարհորդության ամենաապահով եղանակը դարձնելու գործում: 1947թ., երբ օդային փոխադրամիջոցներից օգտվում էր 9 միլիոն մարդ, ինքնաթիռային վթարներից զոհվեց 590 մարդ: 2004 թվականի դրությամբ օդով ճանապարհորդող 3,3 միլիարդ ուղևորներից վթարների պատճառով զոհվել է 420 մարդ: Նույն սկզբունքով ՄԱԿ-ի Ծովային միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ/IMO) ջանում է ծովերը դարձնել առավել անվտանգ: Վիճակագրությունը վկայում է, որ նավագնացությունը հետզհետե դառնում է ավելի ապահով, և բարելավվում են դրա բնապահպանական չափանիշները: Նավաբեկությունների թիվը աստիճանաբար նվազում է, մահացության դեպքերը կրճատվում են, աղտոտման դեպքերը նվազել են, ընդհանուր նավթային արտահոսքերի աղտոտումը նույնպես նվազել է, օդի և կոյուղու արտանետման հետ կապված աղտոտման հարցերը ուշադրության կենտրոնում են, իսկ ծովով բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների թիվը շարունակաբար աճում է:

Իսխակ արխիվ ՀՏԿ

46 Անօրինական թմրամիջոցների հիմնախնդրի լուծում

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների կանխման գրասենյակի (ԹՀԿԳ/ODC) գործունեությունն ուղղված է անօրինական թմրամիջոցների մատակարարման և դրանց պահանջարկի կրճատմանը՝ հիմնվելով թմրամիջոցների վերահսկման մասին ՄԱԿ-ի երեք կոնվենցիաների դրույթների վրա: Գրասենյակը զբաղվում է նաև թմրամիջոցների չարաշահման սոցիալական և առողջապահական հետևանքներով, այդ թվում՝ թմրամիջոցների օգտագործման հետ կապված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման հարցերով: ԹՎՀԿԳ-ի աշխատանքի նպատակն է օգնել իրավապահ մարմիններին, նպաստել թմրամիջոցների օգտագործման արգելման և թմրամոլների բուժման համայնքային ծրագրերին: Գրասենյակը հանդես է եկել նաև այնպիսի նախաձեռնություններով, որոնց օգնությամբ աղքատ ֆերմերներին հաջողվել է նվազեցնել իրենց կախվածությունն անօրինական կուլտուրաներից և վերադառնալ ապրուստի ապահովման օրինական ձևերին:

47 Պայքար միջազգային հանցագործության դեմ

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների կանխման գրասենյակը համագործակցում է անդամ պետությունների և բազմաթիվ կազմակերպությունների հետ՝ դիմակայելու միջազգային կազմակերպված հանցագործությանը, և իրավական ու տեխնիկական միջոցներով աջակցում է այդ կազմակերպություններին՝ պայքարելու կոռուպցիայի, անօրինական փողերի լվացման, թմրամիջոցների և մարդկանց թրաֆիքինգի, անօրինական միգրանտների և մաքսանենգության ուրիշ ձևերի դեմ: Գրասենյակի աշխատանքն ընդգրկում է նաև անդամ պետությունների քրեական օրենսդրության համակարգերի ամրապնդումը: ՄԱԿ-ի ԹՀԿԳ-ն առանցքային դեր է խաղացել նաև միջազգային հանցագործության դեմ ուղղված մի շարք միջազգային կոնվենցիաների մշակման և կիրարկման գործում:

48 Ազնիվ աշխատանքի խրախուսում

ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ/ILO) մշակել և կյանքի է կոչել աշխատանքին առնչվող միջազգային չափանիշներն ու չափորոշիչները, հիմնարար սկզբունքներն ու իրավունքները, ի թիվս որոնց անհրաժեշտ է նշել միավորման ազատության իրավունքը, կազմակերպելու և հավաքական սակարկման իրավունքը, հարկադրական աշխատանքի բոլոր ձևերի վերացումը, մանկական աշխատանքի արգելումը և աշխատավայրում խտրականության կանխումը: Աշխատանքի խրախուսումը, համատարած սոցիալական պաշտպանությունը, ինչպես նաև կառավարության և աշխատավորների ու գործատուների կազմակերպությունների միջև առողջ երկխոսության ապահովումը Աշխատանքի միջազգային կազմակերպության գործունեության առանցքն են:



ՄԱԿ / ՕՑՈՒ

49 Գրագիտության և կրթության բարելավում զարգացող երկրներում

Զարգացող երկրների չափահաս բնակչության 76 տոկոսն այսօր սովորել է կարդալ և գրել, իսկ անչափահաս երեխաների 84 տոկոսը հաճախում է տարրական դասարաններ: Ներկայիս առաջնահերթ նպատակն է ապահովել, որ մինչև 2015թ. բոլոր երեխաներն ավարտեն տարրական դպրոցի լիարժեք դասընթացը: 2000թ. տվյալներով կանանց կրթության և առաջխաղացման ծրագրերն օգնել են զարգացող երկրներում կանանց գրագիտության աստիճանը 1970թ. գրանցված 36 տոկոսից հասցնել մինչև 70 տոկոսի: Այժմ գերխնդիրն այն է, որ մինչև 2015 թվականը բոլոր աղջիկներն ավարտեն տարրական և միջնակարգ դպրոցի դասընթացը:



ՍՈՇՈ / ՅՈՒՆԻՍԵՖ

ՄԱԿ / Հ. Արիսիյան

50 Համաշխարհային պարտավորությունների ստանձնում՝ ի նպաստ երեխաների

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, էլ Սալվադորից մինչև Լիբանան և Սուդանից մինչև նախկին Հարավսլավիա, առաջնորդել է այսպես կոչված «խաղաղ օրերի հաստատման» և «խաղաղ միջանցքների բացման» միջոցառումները, որպեսզի պատվաստանյութեր և ուրիշ անհրաժեշտ օգնություն հասցվի զինված հակամարտությունների բովում հայտնված և դրանց խիստ կարիքն զգացող երեխաներին: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան այսօր օրենքի ուժ է ստացել 192 պետություններում: 2002թ. ՄԱԿ-ի՝ երեխաներին նվիրված հատուկ նստաշրջանից հետո 190 երկրների կառավարություններ ստանձնեցին մի շարք պարտավորություններ առողջապահության, կրթության, դաժան վերաբերմունքից երեխաների պաշտպանության, երեխաների շահագործման և նրանց նկատմամբ բռնությունների արգելման, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի վերաբերյալ:

Հիսուս Քրիստոսի Փրկչի եկեղեցի / ՀՏԿ / նորոգված

51 Պատմական, մշակութային, ճարտարապետական և բնական կոթողների պահպանում

ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ/UNESCO) աջակցել է 137 երկրների կառավարությունների՝ պահպանելու հնագույն հուշարձանները և պատմա-մշակութային ու բնության կոթողները: ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ կնքվել են մի շարք միջազգային համաձայնագրեր՝ պատմական, մշակութային և ճարտարապետական բարձրարժեք կոթողների, ինչպես նաև բնական տեսարժան վայրերի պահպանության վերաբերյալ:

52 Կրթական և մշակութային փոխանակման խրախուսում

Իր տարբեր կառույցների՝ մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՄԱԿ-ի համալսարանի միջոցով Միավորված ազգերի կազմակերպությունը մշտապես խրախուսել է կրթական և գիտական համագործակցությունը, ուսումնական հաստատությունների ցանցերի կազմավորման և մշակութային արտահայտչաձևերի խթանման գործընթացը, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների և տեղաբնիկ ժողովուրդների:



53 Մտավոր սեփականության պահպանում

ՄԱԿ-ի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՄՀԿ/WIPO) զբաղվում է ստեղծագործողների ու մտավոր սեփականության տերերի իրավունքների պաշտպանությամբ և հետևում, որ գյուտարարներն ու հեղինակները ճանաչվեն և վարձատրվեն իրենց տաղանդի համար: Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը խթանում է մարդկային ստեղծագործությունը, առաջ մղում գիտության և տեխնոլոգիաների սահմանները, հարստացնում արվեստի և գրականության աշխարհը: Մտավոր սեփականության արգասիքների շուկայի համար կայունության միջավայր ապահովելով՝ ՄՄՀԿ-ն նշանակալի ներդրում է կատարում նաև միջազգային առևտրի զարգացման գործում:

54 Մամուլի և խոսքի ազատության խթանում

Մարդկանց գրաքննադատությունից զերծ և մշակութային տեսանկյունից տարատեսակ տեղեկատվություն հասցնելու նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ն օժանդակում է լրատվամիջոցների զարգացմանն ու կատարելագործմանը, օգնում անկախ թերթերին, հեռուստածրագրերին և ռադիոընկերություններին: ՅՈՒՆԵՍԿՕ-ն հսկում է նաև, որպեսզի պահպանվի մամուլի և խոսքի ազատությունը, դատապարտում այնպիսի լուրջ խախտումներ, ինչպիսիք են լրագրողների սպանությունը և ազատազրկումը:

Bunkum FSA

55 Հետնախորշերի վերափոխում քաղաքակիրթ մարդկային բնակավայրերի

Երկրագնդի բնակչության շուրջ 50 տոկոսն ապրում է քաղաքներում: Քաղաքն այսօր համազգային արտադրության և սպառման հիմնական կենտրոնն է, որտեղ տեղի են ունենում հարստության և բարգավաճման տանող տնտեսական ու սոցիալական գրեթե բոլոր գործընթացները: Սակայն քաղաքներում են կենտրոնացած նաև հիվանդությունները, հանցավորությունը, աղտոտումն ու չքավորությունը: Շատ քաղաքներում, հատկապես զարգացող երկրներում, բնակչության մոտ 50 տոկոսն ապրում է հետնախորշերում՝ զուրկ ծածկից, ջրից կամ կոյուղուց: ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի կենտրոնի (ՀԱԲԻՏԱՏ / HABITAT) ավելի քան 150 տեխնիկական ծրագրերն ու նախագծերը, որոնք իրականացվում են աշխարհի 61 երկրներում կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, փորձում են գտնել նորարարական լուծումներ մեծ ու փոքր քաղաքների հիմնախնդիրները լուծելու համար: Ի թիվս այլ ձեռնարկումների, այդ ծրագրերը նպատակ ունեն ապահով կացարաններ տրամադրել քաղաքաբնակ աղքատներին, խթանել, որպեսզի այլ կազմակերպություններ ու անհատներ ներդրումներ կատարեն՝ աղքատների համար կացարաններ և առաջին անհրաժեշտության ծառայություններ ապահովելու համար:

56 Համաշխարհային փոստային ծառայությունների բարելավում

Փոստային համընդհանուր միությունը (ՓՀՄ/UPU)՝ մոլորակի փոստային ծառայությունների համագործակցության առաջատար ֆորումը, օգնում է կազմավորել ապրանքների ու ծառայությունների իրապես համապարփակ ցանց, որ բավարարում է ժամանակի խստագույն պահանջները: Միությունը սահմանում է միջազգային փոստային փոխանակման կանոնները և տալիս խորհուրդներ ու առաջարկություններ, թե ինչպես մեծացնել փոստային առաքումների ծավալը և բարելավել սպառողներին մատուցվող ծառայությունների որակը: Փոստային համընդհանուր միության անդամ 190 պետությունների փոստային ծառայությունները կազմում են աշխարհագրական տեսանկյունից աշխարհի խոշորագույն փոստային բաշխիչ ցանցը, որտեղ տարեկան շրջանառությունը կազմում է մոտավորապես 430 միլիարդ միավոր:

ПЕЗО / ЗЕМЛЯ

57 Գյուղատնտեսական նորագույն տեխնիկայի կիրառում և ծախսերի կրճատում

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ, որի արդյունքը եղան բերքատվության բարձրացումը, ռազմավարական բարեփոխումներն ու տեղական բնակչության մասնակցության խթանումը, բրնձի աճեցմամբ զբաղվող ասիացի ֆերմերները տարեկան խնայեցին մոտ 50 միլիոն դոլար՝ կրճատելով պեստիցիդների օգտագործումը և նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը: Նրանց կառավարությունները տարեկան տնտեսեցին ավելի քան 150 միլիոն դոլար՝ պեստիցիդների համար պետության կողմից նախատեսված նպաստների հոդվածով: Պեստիցիդների կրճատումից ստացված բնապահպանական և առողջապահական համընդհանուր օգուտը գնահատվում է տարեկան շուրջ 10 միլիոն դոլար:

58 Հաշմանդամների իրավունքների խթանում

Միավորված ազգերի կազմակերպությունը մշտապես եղել է հաշմանդամությամբ տառապող մարդկանց հավասար իրավունքների համար մղվող պայքարի առաջին շարքերում՝ քաջալերելով այդ մարդկանց մասնակցությունը պետությունների սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում: ՄԱԿ-ը ցույց է տվել, որ հաշմանդամները անգնահատելի ռեսուրս են հասարակության համար և, ի ապացույց դրան, մշակում է պատմության մեջ աննախադեպ մի կոնվենցիա, որը պաշտպանում է հաշմանդամների իրավունքներն ու արժանապատվությունն ամբողջ աշխարհում:

59 Համաշխարհային հեռահաղորդակցության բարելավում

Հեռահաղորդակցության միջազգային միությունն (ՀՄՄ/ITU) աշխատում է միավորել անդամ պետություններին և հեռահաղորդակցության ոլորտի մասնագետներին՝ զարգացնելու և համակարգելու հեռահաղորդակցության համաշխարհային ցանցերի և ծառայությունների գործունեությունը: ՀՄՄ-ն կոորդինացրել է ռադիոտիրույթի հավասարաչափ օգտագործման գործընթացը, խթանել միջազգային համագործակցությունն արբանյակների ուղեծրերը որոշելու գործում, աշխատել զարգացող պետություններում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ և քննարկել միջազգային չափանիշների որոշման հարցերը, որոնց միջոցով հնարավոր է ապահովել հաղորդակցման համակարգերի վիթխարի ցանցի անխափան աշխատանքը: Ինտերնետի հսկայածավալ ցանցից մինչև նորագույն սերնդի ռադիոտեխնոլոգիաները, օդագնացությունից ու ծովագնացությունից մինչև ռադիոաստղագիտություն և արբանյակային օդերևութաբանություն, հեռախոսային ու ֆաքսային ծառայություններից մինչև հեռուսատեսությունն ու ապագա սերնդի ցանցերը. այս ամբողջ տիրույթում ՀՄՄ-ն ջանում է օգնել աշխարհին հաղորդակցվել: Այս միության աշխատանքի շնորհիվ հեռահաղորդակցությունը դարձել է 1 տրիլիոն դոլար արժողությամբ գլոբալ ոլորտ:

ในประเทศไทย

ՀՏԿ արխիվ

60 Տեղաբնիկ ժողովուրդների վիճակի բարելավում

Միավորված ազգերի կազմակերպության անդադրում ջանքերով մերկացվել են այն անարդարությունները, որոնք կատարվել են աշխարհի 70 պետություններում ապրող շուրջ 370 միլիոն տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ, որոնք այսօր համալրում են մոլորակի բնակչության ամենաընչազուրկ և ամենախոցելի խմբերի շարքերը: Տեղաբնիկ ժողովուրդների հարցերով զբաղվող 16 անդամից բաղկացած մշտական համաժողովը, որ հիմնադրվեց 2000 թ., փորձում է բարելավել տեղաբնիկ ժողովուրդների վիճակն ամբողջ աշխարհում: Այստեղ քննության է առնվում զարգացման, մշակույթի, մարդու իրավունքների, շրջակա միջավայրի, կրթության և առողջապահության հետ կապված հարցերի մի լայն շրջանակ:

ՄԱԿ-ին շնորհված Խաղաղության Նոբելյան մրցանակները

2005թ. Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը և նրա Գլխավոր տնօրեն Մոհամեդ Էլբարադեին

2001թ. Միավորված ազգերի կազմակերպությանը և նրա Գլխավոր քարտուղար Քոֆի Անանին

1988թ. ՄԱԿ-ի Խաղաղապահ ուժերին

1981թ. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին

1969թ. Աշխատանքի միջազգային կազմակերպությանը

1965թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամին

1961թ. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Դագ Համարշյոլդին

1954թ. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին

1950թ. ՄԱԿ-ի Խնամակալության բաժնի տնօրեն՝ Ռալֆ Բանչին

Միավորված ազգերի կազմակերպության համակարգը

Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ/ILO) www.ilo.org
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ/WHO) www.who.org
Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ/WTO) www.wto.org
Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ/IAEA) www.iaea.org
Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ/IMF) www.imf.org
Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ (ԳԶՄՀ/IFAD) www.ifad.org
Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն (ԶՀԿ/WTO) www.world-tourism.org
Ծովագնացության միջազգային կազմակերպություն (ԾՄԿ/IMO) www.imo.org
Կանանց առաջխաղացման ուսումնական և գիտահետազոտական միջազգային ինստիտուտ (ԿԱՈՒԳՄԻ/INSTRAW) www.un-instraw.org
Համաշխարհային բանկի խումբ www.worldbank.org
Հեռահաղորդակցության միջազգային միություն (ՀՄՄ/ITU) www.itu.int
ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով (ՄԱԱԶՀ/UNCTAD) www.unctad.org
ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՄԱԱԶԿ/UNIDO) www.unido.org
ՄԱԿ-ի Բնակավայրերի կենտրոն (Հաբիտատ/UN-HABITAT) www.unhabitat.org
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ (ՄԱԲՀ/UNFPA) www.unfpa.org
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ/UNDP) www.undp.org
ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների կանխման գրասենյակ (ԹՀԿԳ/ODC) www.unodc.org
ՄԱԿ-ի Կամավորներ (ՄԱԿԿ/UNV) www.unv.org
ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամ (ՄԱԿԶՀ/UNIFEM) www.unifem.org
ՄԱԿ-ի Կապիտալ զարգացման հիմնադրամ (ԿԶՀ/UNCDF) www.uncdf.org
ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ/UNESCO) www.unesco.org
ՄԱԿ-ի Համալսարան (ՄԱՀ/UNU) www.unu.edu
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՄԱՄՀ/UNICEF) www.unicef.org
ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳՀԳ/OHCHR) www.ohchr.org
ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալություն (ՄԱՕԱԳ/UNRWA) www.un.org/unrwa
ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր (ՄԱՁԻԱՀ/UNAIDS) www.unaids.org
ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր (ՄԱՇՄԾ/UNEP) www.unep.org
ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ/FAO) www.fao.org
ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱՓԳՀԳ/UNHCR) www.unhcr.org
Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրային կազմակերպություն (ՓՀԱՊԿ/CTBTO) www.ctbto.org
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄԱՀԿ/WIPO) www.wipo.int
Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ/WFP) www.wfp.org
Փոստային համընդհանուր միություն (ՓՀՄ/UPU) www.upu.int
Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ՔԱՄԿ/ICAO) www.icao.int
Քիմիական զենքի արգելման կազմակերպություն (ՔԶԱԿ/OPCW) www.opcw.org
Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպություն (ՕՀԿ/WMO) www.wmo.ch

Հազարամյակի զարգացման նպատակների մասին հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել ստորև բերված հասցեներում՝
www.un.org/millenniumgoals
www.millenniumcampaign.org
millenniumindicators.un.org

Լրացուցիչ տեղեկություններ ՄԱԿ-ի գործունեության մասին տես՝
www.un.org/works

Prepared for publication by UN Department of Public Information Yerevan Office with support from DPI Information Centre Service, and is a translation from "60 ways the United Nations makes a difference" brochure. The design and idea of the publication belongs to DPI Headquarters.

Պատրաստվել է տպագրության Միավորված ազգերի կազմակերպության Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակի կողմից ՀՏՎ Տեղեկատվության կենտրոնի ծառայության աջակցությամբ: Թարգմանվել է նույնանուն անգլերեն գրքույկից: Ձևավորումն ու մտաղհացումը ՀՏՎ կենտրոնական գրասենյակինն է:



ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակը Նյու Յորքում՝ հոբելյանական տեսքով

UN AN-1000
November, 2005
UNO/DPI Yerevan/078

Շապիկի լուսանկարը.
ՄԱԿ-ի 60-ամյակին նվիրված բացօթյա համերգը Երևանում
Լուս. Մխիթար Խաչատրյանի / ՀՏՎ արխիվ